

Ղզլարի հայերի խոսակցական լեզուն մի քանի բարբառների (Թիֆլիսի, Երեանի, Ղարաբաղի) խառնուրդ է։ Այդ խառնվածքի բառապաշարի սովոր մասը հայերենի ավանդական բառերն են. մուտք են կտրծել նաև մեծ թվով բառեր օտար լեզուներից՝ կումիկերենից և ուսսերենից։

1905 թ. հետո Ղզլարի հայերի խոսվածքը որոշ չափով ազդվել է հայոց զրական լեզվից։ Դրան մեծապես նպաստել են ղզլարցի հայ երիտասարդները, որոնք ավարտելով ազդային դըպրոցները (նոր նախնիներում, Թիֆլիսում, Էջմիածնում) և զայնով իրենց ջննդավայրը, աշխատել են այնտեղի հայկական կուլտուր-կրթական հիմնարկներում։

Տարբեր ժամանակներում և աարբեր վայրերից Ղզլար են գաղթել հայեր, և յուրաքանչյուրն իր բարբառից մի քանի տասնյակ բառեր ու զարկավածքներ խառնել է Ղզլարի խոսվածքին։

Այսպես, օրինակ, շատ բառեր փոխառված են Թիֆլիսի բարբառից՝ բարաթ, բեղամաղ, բիծա, դեղա, էնգուր, թամաղա, թամաշա, թարիփ, մազամ, մամիդա, մնդոկ, մոդոնել, ջրգրու և այլն։

Ղզլարի խոսվածքում դործածված շատ բառեր կան, որոնք փոխանցվել են ուսսերենից, օրինակ՝ ալուշկա, արշին, բուշա, դադա (ДЯДА), դիվան, դյուփին, էտաթ, ժեստ, կառոշ, կամոդ, կուր, նաչալնիկ, շպաֆ, շայ, շայնիկ, պաշպորա, պլիտա, սալդաթ, սպիշկա, վերստ, սմավառ, տոտա (ТӨТЯ), փեշ, փեշատ, փութ, օֆիցեր և այլն։

Շատ բառեր էլ վերցված են հարեան կումիկների լեզվից, ինչպես՝ արարա, արիշ, բայթալ (մատակ ձի), թաթաուլ (ջրանցք), ինադ, դավուն (սեխ), դարդա, մառալ, յադրաշ (դարուն) և այլն։

Ղզլարի խոսվածքը, վերոհիշյալ բարբառների հետ ունեցած ընդհանրություններից պատ, ունի նաև իր առանձնահատկությունները՝ քերականական հնչյունաբանական տեսակետից։

Մեր կարծիքով, Ղզլարի բարբառը թե՛ քերականական կառուցվածքով և թե՛ հնչյունաբանությամբ շատ ավելի մոտ է արարալայան բարբառին, քան թե մի որևէ այլ բարբառի։ Դրա լավագույն ապացույցը կարող են ծառայել բազմաթիվ ոճերն ու դործվածքները՝ ականջիդ օղ արա, աշքր ճամփին մնաց, դանակը օսկոդին հասավ, էրկու էրեսանի մարդ ա, խելքը զնաց, խիսոր

ծուրը դուրս էկավ, կերեք, խմեք, գուշմանի աշքր հանեք, հաց ուտել (ճաշել), հոգիս բերանիցս դուս էկավ, մեծ-մեծ բրդոդ ա (մեծախոս), մեմեկու միս են ուտում (անհաշտ են), շան լափը թափեցին խեղճի գլխին, տախտակը պակաս ա (խելքից պակաս), ուղտի ականջումը քնած ա և այլն)։

Ղզլարի խոսակցական լեզուն որոշ ընդհանրություններ ունի նաև Աստրախանի և Մոզդոկի բարբառների հետ։ Ղզլարի մոտ գտնվող Բեքեթեյ հայ գյուղի բաբառը Ղզլարի բարբառից դրեթե ոչնչով չի տարբերվում։

Մի քանի դեպքերում Ղզլարի խոսվածքում նկատվում են որոշ շեղումներ դրական լեզվի հոլովման և խոնարհման կանոններից։

Գոյականների հոլովման մեջ, օրինակ՝ տուն, շուն, «ծուկ» (ծուկ), մուկ բառերը սեռական հոլովում հնչում են՝ տունի, շունի, ծուկի, մուկի, (փոխանակ՝ տան, շան, ծկան, մկան) տրական՝ շունին, ծուկին և այլն։

Ղզլարի խոսվածքում, ինչպես և դրականում, գոյականները հոգնակիում վերջանում են երկուսի, օրինակ՝ կով—կովեր, տուն—տուներ, հորուստներ, մառան—մառաններ և այլն։

Բայց՝ տխշիկ—ախշիկեք, արարա—արարեք, էրեխա—էրեխեք, կնիկ—կնանիք, մարթ—մարթիկեք, փեսա—փեսեք և այլն։

Բայերի խոնարհման մեջ օժանդակ բայ՝ եմ, ես ա (է), ենք, եք, են։

Անցյալ անկատար՝ ես կալիս իմ (դալիս էի), տու կալիս իր, նա կալիս էր, մենք կալիս ինք, տուք կալիս իք, նրանք կալիս ին։

Անցյալ կատարյալ՝ ես կերամ (կերա), էկամ, կնացիմ, մնացիմ։

Յորդ դեմքում, ինչպես դրականում՝ կերավ, էկավ, կնաց, մնաց, բայց՝ պերավ (բերեց), սիրավ, ուղավ։

Ապտոնի՝ կեթամ, կեթաս, կեթու։
Հրամայական՝ վեկա՛լ (վերցրու), վեկալե՛ք (վերցրեք)։

Դերանուններ՝ ով, սեռական՝ ումի, արական՝ ումին։ Օրինակ՝ ումի՞ տղեն, ումի՞ն տեսար։

Հնչյունաբանությամբ մեջ նկատվում է բազմաչափների հետեյալ անդաշտը. ք, գ, դ հնչյունները շատ բառերում հնչում են համապատասխանաբար՝ պ, կ, տ. ր>պ, օրինակ՝ բան>պան,

րարձր>պացր, րեր>պեր, րերտն>պերան և այլն:
Գ>կ, օրինակ՝ Գալուստ>կալուստ, գալ>
կալ, գնալ>կնալ, գինի>կինի, գիրք>կիրք, դող>
կող:

Դ>Տ, օրինակ՝ դտոր>տաոը, դանակ>տա-
նակ, դուռ>տուռ և այլն:

Դ-ն առանց փոփոխության հնչում է հետևյալ
բառերում՝ Դավիթ, դաս, դատ, դատաստան,
դոստ, դուքան, դութմա, դուռնա (կոռնկ):

Ձ>ծ, օրինակ՝ ձեթ>ծեթ, ձայն>ծեն, ձի>ծի,
ձու>ծու, ձյուն>ծուն և այլն:

Ղ-ն բառի սկզբում արտասանվում է ինչպես
կղ (կոկորդալին)՝ ղազ, Ղտրաբադ, ղարիբ, ղո-
յան (նապաստակ), Ղղար, ղրավ (եղյամ) և այլն:
Իսկ բառամիջում և բառավերջում արտասանվում
է դ՝ ադ, բադ, մաղ, մատադ, դադել, մաղել, քա-
ղել և այլն:

Ջ-ն արտասանվում է ինչպես ճ հետևյալ բա-
ռերում՝ ճաղաչ, ճիլ, ճնչել, ճոկ, ճուր, ճրիկ և
այլն: